

Տեղեկագիրը հիմնադրվել է 2022թ. ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման
ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

Գիտական խորհրդի որոշման համաձայն

Бюллетень основан в 2022г. по решению Ученого совета

ГНО « Национальный центр по контролю
и профилактике заболеваний» МЗ

Bulletin was founded in 2022 by the decision of the Scientific Council of the National Center of
Disease Control and Prevention SNCO, MOH

Գլխավոր խմբագիր՝ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Մելիք-Անդրեասյան Գ.
Խմբագրական խորհուրդ՝ Աբովյան Ռ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Ալեքսանյան Յու., Բ.Գ.Թ. Ավետիսյան Լ., Բակունց Ն., Գրիգորյան Ս.,
Սահակյան Գ., Բ.Գ.Թ. Վանյան Ա.

Քարտուղարություն՝ Զաքարյան Ս., Հովհաննիսյան Մ.

Главный редактор д.м.н. профессор Мелик-Андреасян Г.

Редакционный совет: Абовян Р., к.м.н. Аветисян Л.,
академик НАН РА Алексанян Ю., Бакунц Н.,
к.м.н.Ванян А., Григорян С., Саакян Г.

Секретариат: Закарян С., Оганесян М.

Editor-in-Chief DSc., Professor Melik-Andreasyan G.

Editorial Board: Abovyan R., academician NAS RA Aleksanyan Yu.,
PhD Avetisyan L., Bakunts N., Grigoryan S.,
Sahakyan G., PhD Vanyan A.

Secretariat: Hovhannisyan M., Zakaryan S.

ԱՄՍԱԿԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
MONTHLY EPIDEMIOLOGICAL BULLETIN
ЕЖЕМЕСЯЧНЫЙ ЭПИДЕМИОЛОГИЧЕСКИЙ БЮЛЛЕТЕНЬ

**COVID-19-Ը ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՐՁԸ**

**COVID-19 AS A GLOBAL HEALTH CHALLENGE:
THE EXPERIENCE OF ARMENIA**

**COVID-19 – ГЛОБАЛЬНАЯ ПРОБЛЕМА
ЗДРАВООХРАНЕНИЯ: ОПЫТ АРМЕНИИ**

ՄԱՅԻՍ 2022

MAY 2022

МАЙ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

CONTENTS

СОДЕРЖАНИЕ

- COVID-19-Ը ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
- ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԱԼԻՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ
- ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ ՄԱՅԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
- ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑ
- ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

- COVID-19 AS A GLOBAL HEALTH CHALLENGE
- MEASURES TAKEN TO OVERCOME COVID-19 IN THE REPUBLIC OF ARMENIA
- COVID-19 WAVES IN REPUBLIC OF ARMENIA
- COVID-19 SITUATION IN REPUBLIC OF ARMENIA AS OF MAY 1
- VACCINATION AS THE BEST WAY TO PREVENT COVID-19
- COVID-19 VACCINATION IN REPUBLIC OF ARMENIA: STATISTICAL DATA

- COVID-19, КАК ГЛОБАЛЬНАЯ ПРОБЛЕМА ЗДРАВООХРАНЕНИЯ
- МЕРЫ ПО ПРЕОДОЛЕНИЮ КОРОНАВИРУСНОЙ БОЛЕЗНИ (COVID-19) В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
- ВОЛНЫ КОРОНАВИРУСНОЙ БОЛЕЗНИ (COVID-19) В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ
- СИТУАЦИЯ ПО КОРОНАВИРУСНОЙ БОЛЕЗНИ (COVID-19) В РА, ПО СОСТОЯНИЮ НА 1-е МАЯ
- ВАКЦИНАЦИЯ, КАК НАИЛУЧШАЯ МЕРА ПРОФИЛАКТИКИ КОРОНАВИРУСНОЙ БОЛЕЗНИ (COVID-19)
- ВАКЦИНАЦИЯ ПРОТИВ КОРОНАВИРУСНОЙ БОЛЕЗНИ (COVID-19) В РА: СТАТИСТИЧЕСКИЕ ДАННЫЕ

ՄԱՅԻՍ 2022

MAY 2022

МАЙ 2022

COVID-19-Ը ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

2019 թվականի դեկտեմբերի 31-ին Ուիան քաղաքի առողջապահական հանձնաժողովը զեկույց հրապարակեց անհայտ պատճառագիտությամբ թոքաբորբի 27 դեպքի հայտնաբերման վերաբերյալ, իսկ հունվարի 7-ին Չինաստանի իշխանությունները հաստատեցին, որ հիվանդության հարուցիչը նոր կորոնավիրուսն է, որը ժամանակավորապես ստացավ «2019-nCoV» անվանումը, իսկ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից հրապարակվեց զեկույց Չինաստանում անսովոր թոքաբորբի բռնկման ռիսկի գնահատման վերաբերյալ: Հաշվի առնելով ԱՀԿ-ի զեկույցը՝ Հայաստանի Հանրապետությունում դեռևս 2020թ. հունվարից, սկսվել էր COVID-19-ին դիմակայման գործընթացը: Աշխատանքների վաղ մեկնարկը պայմանավորված էր COVID-19-ի նոր լինելով և տարածվելու միտումով, որը կարող էր բերել հանրային առողջապահական ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակի:

Աշխարհում COVID-19-ով պայմանավորված համաճարակային իրավիճակը հարաբերական կայուն է: Մայիսի 1-ի դրությամբ (11:32pm CEST) աշխարհում արձանագրվել է հիվանդության 513,651,195 հաստատված դեպք, որից նոր դեպքերը՝ 293,010, իսկ մահվան ելքով դեպքերը՝ 6,261,807 (2.03%):¹ Դեպքերն արձանագրվել են 223 երկրում, իսկ առավել բարձր հիվանդացություն արձանագրող երկրների ցանկում են ԱՄՆ-ն, Հնդկաստանը, Բրազիլիան, Ռուսաստանի Դաշնությունը, Ֆրանսիան, Միացյալ Թագավորությունը, Թուրքիան, Արգենտինան, Կոլումբիան, Իսպանիան, Իտալիան, Իրանը և այլն:²

Գծապատկեր 1. Դեպքերի համամասնությունն՝ ըստ ԱՀԿ տարածաշրջանների

Situation by WHO Region

Europe	214 635 881 confirmed
Americas	152 929 420 confirmed
South-East Asia	67 826 369 confirmed
Western Pacific	54 368 755 confirmed
Eastern Mediterranean	21 696 595 confirmed
Africa	8 813 883 confirmed

Source: World Health Organisation
Data may be incomplete for the current day or week.




ԱՀԿ-ն, համագործակցելով այլ միջազգային փորձագիտական կառույցների, ազգային իշխանությունների, տարբեր հաստատությունների և հետազոտողների հետ, 2020 թվականի հունվարից հետևում և գնահատում է SARS-CoV-2-ի մուտացիաները: 2020թ. վերջին տարբերակների ի հայտ գալը, որոնք մեծ վտանգ էին ներկայացնում գլոբալ հանրային առողջության համար, դրդեց դասակարգել տարբերակները որպես «Անհանգստություն առաջացնող» Variants of concern (Voc), «Հետաքրքրություն ներկայացնող» Variants of interest (VOI) և «Մոնիթորինգի ցուցակ» Alerts for Further Monitoring (VUM): ԱՀԿ-ն վերջիններս անվանում է կորոնավիրուսի նոր տարբերակներ՝ օգտագործելով հունական այբուբենի տառերը՝ սկսած «Ալֆա» տարբերակից, որն ի հայտ է եկել 2020 թվականին:

1 <https://covid19.who.int/>

2 <https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019>



Variants of Concern



ԱՂՅՈՒՍԱԿ 1.- COVID-19 հարուցչի առավել վտանգավոր տարբերակները

ԱՅԿ անվանում	Առաջին անգամ արձանագրվել է	Արձանագրման տարեթիվ
Alpha	Մեծ Բրիտանիա	2020թ սեպտեմբեր
Beta	Հարավային Աֆրիկա	2020թ սեպտեմբեր
Gamma	Բրազիլիա	2020թ. դեկտեմբեր
Delta	Հնդկաստան	2020թ. դեկտեմբեր
Omicron	Հարավային Աֆրիկա	2021թ. նոյեմբեր
Omicron BA.1	Հարավային Աֆրիկա	2021թ. նոյեմբեր
Omicron BA.2	Ֆիլիպիններ	2021թ. նոյեմբեր
Omicron BA.3	Հարավային Աֆրիկա	2021թ. նոյեմբեր
Omicron BA.4	Հարավային Աֆրիկա	2022թ. հունվար
Omicron BA.5	Հարավային Աֆրիկա	2022թ. փետրվար

Աղյուսակ 1-ում ներկայացված են համավարակի ընթացքում կորոնավիրուսային հիվանդության առավել վտանգավոր տեսակները՝ ըստ ժամանակագրության, որոնց մուտացիաները ավելացրել են կորոնավիրուսային հիվանդության՝ մարդուց մարդ փոխանցվելու հատկությունը, փոխել են հիվանդության ախտանշանները, կամ դարձրել են այն ավելի կայուն պատվաստանյութերի, դեղորայքի նկատմամբ: Այս պահի դրությամբ մի մասն արդեն իսկ գտնվում են «Դեֆսկալացված տարբերակներ» ցուցակում: «Դեֆսկալացված տարբերակները» կորոնավիրուսային հիվանդության այն տեսակներն են, որոնք այլևս չեն շրջանառվում կամ շրջանառվում են բավականին երկար ժամանակ՝ չթողնելով որևէ էական ազդեցություն համաճարակային իրավիճակի վրա:³

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՆԿ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

2020թ. հունվարի 26-ին, երբ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հայտարարեց կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված բռնկման ծանրության աստիճանի 3-րդ մակարդակ՝ ըստ 3 բալանոց համակարգի, Հայաստանում արդեն իսկ սկսված էին COVID-19-ի դեմ պայքարի նախապատրաստական աշխատանքները: 2020թ. հունվարի 23-ից Հայաստանի Հանրապետությունում COVID-19-ի կանխարգելման

3 <https://www.ecdc.europa.eu/en/covid-19/variants-concern>



նպատակով, առողջապահության նախարարությունը, համագործակցելով բոլոր շահագրգիռ գերատեսչությունների հետ, սկսել էր ձեռնարկել COVID-19-ի դեմ պայքարի մի շարք միջոցառումներ: Միջազգային փորձի և ԱՀԿ առաջարկների ուսումնասիրության արդյունքում հանրապետությունում տեղայնացվել էին COVID-19-ի դեմ պայքարի ուղեցույցները, ստեղծվել էին օրենսդրական հիմքեր՝ կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար, հանրապետության բժշկական կազմակերպություններում COVID-19-ի դիմակայումն ապահովելու համար իրականացվել էր առկա կարողությունների գնահատում, վարակի հսկողության ծրագրերի վերանայում և տեղայնացում: Մշտական կապ է ապահովվել միջազգային կազմակերպությունների և տարածաշրջանի գործընկերների հետ՝ վարակի դեմ պայքարի գործում կարողությունների զարգացման նպատակով:

Հայաստանում առաջին դեպքն արձանագրվեց 2020թ. մարտի 1-ին՝ Իրանից ժամանած անձի մոտ: Դեպքը հայտնաբերելուց հետո, բոլոր կոնտակտավորների նկատմամբ, որպես հակահամաճարակաբանական միջոցառում, կիրառվեց մեկուսացումը՝ այդ նպատակի համար առանձնացված վայրերում, որի արդյունքում զսպվեց համավարակի արագընթաց զարգացումը՝ հնարավորություն ընձեռելով առողջապահական համակարգին վերակազմավորվել և դիմակայել համավարակին՝ կիրառելով թիրախային միջոցառումներ: Առաջին դեպքն արձանագրելուց հետո մշակվեց COVID-19 պացիենտների վերաբերյալ տեղեկատվության առաջին ազգային բազան: Մարտ ամսվա սկզբին Երևան ժամանեցին ԱՀԿ-ի տարածաշրջանային փորձագետները, ովքեր իրականացրեցին COVID-19-ի դեմ պայքարի ուղղությամբ հոսափտալային պատրաստվածության գնահատում: Ձևավորվեց 24/7 ռեժիմով գործող «Օպերատիվ զանգերի կենտրոնը», ինչի միջոցով բնակչությանը տրամադրվեց COVID-19-ին առնչվող հարցերի պատասխաններ, ուղղորդումներ:

Հանրապետությունում COVID-19-ի տարածումը կանխարգելող աշխատանքների համակարգման նպատակով ստեղծվեց Միջգերատեսչական հանձնաժողով, իսկ էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական ԱՐՄԵԴ համակարգը հարմարեցվեց կորոնավիրուսային հիվանդության հետ կապված երկրի պահանջներին և Առողջապահության նախարարությունն սկսեց համակարգի լիարժեք կիրառումը:

Համաճարակի զարգացման փուլերին համապատասխան մշակվեց արտակարգ իրավիճակների արձագանքման 3 պլան: Պլանները գործադրվեցին ողջ հանրապետության համար: ԱՀԿ-ի, ինչպես նաև մի շարք պետությունների փորձի հիման վրա, COVID-19-ի կանխարգելման նպատակով, մշակվեց և, ըստ անհրաժեշտության, բարելավվեց օրենսդրական դաշտը: Վերջիններիս շրջանակներում միջազգային փորձի և ԱՀԿ-ի նոր առաջարկներին համահունչ, ըստ անհրաժեշտության, վերանայվեցին և ներդրվեցին COVID-19-ի դեպքի ստանդարտ սահմանումը, COVID-19-ի կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները, և շարունակաբար իրականացվեցին COVID-19-ի համաճարակաբանական դիտարկման համակարգի շրջանակներում ստացված տվյալների վերլուծություններ: Վերլուծությունների հիման վրա գնահատվեց առկա իրավիճակը, արդյունքում, ըստ անհրաժեշտության, ներկայացվեց կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների փաթեթ՝ սահմանափակումների մեղմացման կամ խստացման վերաբերյալ: Մասնավորապես՝ 2020թ. մարտի 16-ին Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարվեց արտակարգ դրություն, իսկ 2020թ. սեպտեմբերի 11-ից ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվեց կարանտին Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Արտակարգ



դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծվեց պարետատուն: Ներդրվեցին ազատ տեղաշարժի և տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ սահմանափակումներ: Սահմանվեց մուտքի և ելքի հատուկ ռեժիմը, ինքնամեկուսացումը, արգելվեց հանրային տրանսպորտի գործունեությունը, որոշ կարգավորումներով՝ միջմարզային տեղաշարժը: Ներդրվեցին հանրային հավաքների և միջոցառումների նկատմամբ ժամանակավոր արգելքներ և սահմանափակումներ, բաց և փակ տարածքներում դիմակների կրման պարտադիր պահանջը: Օրենսդրական մակարդակով խստացվեցին վարչական իրավախախտումների համար կիրառվող պատժաչափերը: 2021թ. սահմանվեցին աշխատակիցների աշխատավայր ՊՇՌ բացասական արդյունքով կամ պատվաստումային կարգավիճակով ներկայանալու, հանրային վայրեր մուտք գործելիս QR կոդ ներկայացնելու պահանջները, ըստ անհրաժեշտության առաջարկություններ ներկայացվեցին դպրոցներում դասընթացը հեռավար կազմակերպելու կամ արձակուրդը երկարաձգելու ուղղությամբ:

Սահմանափակումների հիմքում ընկած էր համաճարակաբանական ռիսկի գնահատումը: COVID-19-ի դեմ պայքարի նպատակով մի շարք բժշկական կենտրոններ վերապրոֆիլավորվեցին և դարձան COVID-19 հիվանդների բուժման կենտրոններ: Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պացիենտների բուժման և սպասարկման գործընթացում համավարակի սկզբնական շրջանում՝ մարտ ամսին, ներգրավված էր 1 բժշկական կազմակերպություն՝ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ն: Հետագայում, կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված՝ համավարակի զարգացման փուլերին համապատասխան, հիվանդանոցային բուժման ցուցում ունեցող COVID-19 պացիենտների բժշկական օգնությունն և սպասարկումն ապահովելու նպատակով, ամբողջությամբ կամ մասնակի վերապրոֆիլավորվեց 35 հիվանդանոցային հաստատություն (19-ը՝ մարզերում, իսկ 16-ը՝ Երևանում): Վերջիններս հազեցվեցին անհրաժեշտ սարքավորումներով, դեղերով և բժշկական նշանակության պարագաներով: Վերապրոֆիլավորված հաստատություններում ծավալվեց 3100-ից ավել մահճակալ, որից շուրջ 480-ը՝ վերակենդանացման: Զուգահեռաբար ապահովվեց նաև հիվանդանոցային բուժման ցուցում չունեցող պացիենտների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը՝ առողջության առաջնային պահպանման հաստատություններում:

COVID-19 համավարակի հետ կապված լաբորատոր կարողությունների հզորացման նպատակով 2020թ. ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղում և 5 մարզային մասնաճյուղերում, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի լաբորատորիաներում ներդրվեց COVID-19 ախտորոշման ՊՇՌ մեթոդաբանությունը: Նշված լաբորատորիաները հազեցվեցին անհրաժեշտ սարք-սարքավորումներով, մասնագետներն անցան համապատասխան վերապատրաստումներ (նմուշառման, նմուշի պահպանման տեղափոխման, հետազոտման ուղղությամբ): Կազմակերպվեցին ՀՀ տարածքում գործող COVID-19 նկատմամբ ՊՇՌ մեթոդով հետազոտություններ իրականացնող լաբորատորիաների որակի արտաքին գնահատման ծրագրեր՝ նմուշների վերահաստատման, հարցաշարերով տեղերում գնահատումների միջոցով:

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը,



համագործակցելով Գիտությունների ազգային ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի և Հայ-սլավոնական համալսարանի հետ, իրականացրեց և շարունակում է իրականացնել նմուշների մոլեկուլյար-գենետիկ հետազոտություններ: Ռեֆերենս լաբորատոր կենտրոնում ներդրվեցին հարուցիչների մոլեկուլային գենետիկ հետազոտությունները՝ սեկվենավորման մեթոդաբանությամբ: Մասնավորապես, իրականացվեց COVID-19 վիրուսի սեկվենավորում, ինչի արդյունքում հայտնաբերվեցին «Դելտա», իսկ 2022թ.՝ նաև «Օմիկրոն» տարբերակները:

Պայմանավորված ՀՀ-ում COVID-19-ի հարաբերական կայուն վիճակով՝ 2022 թվականի մայիսի 1-ից աստիճանաբար հանվեցին պետական սահմանի ցամաքային և օդանավակայաններում տեղակայված անցման կետերով մուտք գործելիս ՊՇՌ և արագ ախտորոշիչ թեստով հետազոտության սերտիֆիկատ և պատվաստման սերտիֆիկատ ներկայացնելու, յուրաքանչյուր 7 օրը մեկ աշխատողների աշխատավայր ներկայանալիս ՊՇՌ հետազոտության կամ պատվաստման սերտիֆիկատ ներկայացնելու, հանրային սննդի օբյեկտներ, հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, գրադարան, թանգարան հաճախորդների, այցելուների մուտքը QR կոդով պահանջները:

Ներկայումս անհրաժեշտ է պահպանել հակահամաճարակային անվտանգության կանոնները, շրջակա միջավայրի և ձեռքերի ախտահանումը, 1.5 մետր հեռավորությունը, օդափոխությունը, ապահովել կոնտակտավորների մեկուսացման ժամկետները, դպրոցներում 10 օրվա ընթացքում աշխատողների, սովորողների, ընդհանուր թվի 10 տոկոս և ավելի վարակման դեպքում ուսուցման ժամանակավոր դադարեցումը, բուժփիմնարկի ներկայացվող պահանջները՝ դիմակի կրում, արտահագուստ, անհատական պաշտպանության միջոցներ:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱԼԻՔՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Համավարակից ի վեր Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է COVID-19-ի 5 ալիք.

- Առաջին ալիքն **(2020թ. մայիս-հունիս)** ամենաթույլն էր: Ամենուրեք դիմակների կրման պահանջի կատարումը նպաստեց առաջին ալիքի հաղթահարմանը: Սահմանափակումը մտցնելուց արդեն 2 շաբաթ անց նկատվեց հիվանդացության նվազում 1.3 անգամ, իսկ 1 ամիս անց՝ 1.8 անգամ:
- Երկրորդ ալիքը **(2020թ. սեպտեմբեր-հոկտեմբեր)** զգալիորեն գերազանցեց առաջին ալիքը: Դա պայմանավորված էր ռազմական գործողություններով, երբ հիմնական հակահամաճարակային միջոցառումները չէին իրականացվում, ինչն էլ նպաստեց վիրուսի արագ տարածմանը: Աշնանային արձակուրդների փոփոխությունը և մյուս ուսումնական հաստատությունների հեռավար ռեժիմի անցումը հնարավորություն ընձեռեցին բարելավել իրավիճակը: Սահմանափակումները մտցնելուց հետո դիտվեց գրեթե նույն իրավիճակը, ինչ առաջին ալիքի ժամանակ, արդեն 2 շաբաթ անց նկատվեց հիվանդացության նվազում 1.3 անգամ, իսկ 1 ամիս անց՝ 1.7 անգամ:
- Երրորդ ալիքն **(2021թ. մարտ-ապրիլ)** իր ինտենսիվությամբ մի փոքր գերազանցեց առաջին ալիքը և նույնպես հաղթահարվեց ուսումնական հաստատությունների հեռավար ռեժիմի անցմամբ: Սահմանափակումը մտցնելուց արդեն 2 շաբաթ անց նկատվեց հիվանդացության նվազում 1.1 անգամ, իսկ 1 ամիս անց՝ 1.4 անգամ:
- Չորրորդ ալիքի **(2021թ. հոկտեմբեր-նոյեմբեր)** ընթացքում գրանցվեցին հիվանդացու-




թյան և մահացության բարձր ցուցանիշներ, որոնք գերազանցեցին նույնիսկ 2-րդ ալիքը: Նման իրավիճակը պայմանավորված էր շրջանառվող COVID-19-ի «Դելտա» տարբերակով, ինչի մասին վկայում են սեկվենավորման արդյունքները: Հոկտեմբերի վերջին տասնօրյակից, դպրոցներում վաղաժամ արձակուրդների և ԲՈՒՀ-երի առցանց դասերի անցումից հետո, նկատվեց հիվանդացության նվազում, իսկ նոյեմբերից՝ նաև մահացության նվազում: Սահմանափակումը մտցնելուց արդեն 2 շաբաթ անց նկատվեց հիվանդացության նվազում 1.1 անգամ, իսկ 1 ամիս անց՝ 2.6 անգամ:

- Հինգերորդ ալիքը **(2022թ. հունվար-փետրվար)** պայմանավորված էր շրջանառվող COVID-19-ի «Օմիկրոն» տարբերակով, ինչի մասին վկայում են սեկվենավորման արդյունքները, ինչպես նաև ամբողջ աշխարհում դեպքերի կտրուկ աճը՝ պայմանավորված «Օմիկրոն» տարբերակով:

Փետրվար ամսվա վերջին տասնօրյակից նկատվեց հիվանդացության նվազում, իսկ մարտի երկրորդ տասնօրյակից՝ մահացության նվազում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. COVID-19-ի արձանագրված առավել բարձր հիվանդացության ցուցանիշները՝ ըստ ժամանակահատվածների




ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՀ-ՈՒՄ ՄԱՅԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

2022 թվականի մայիսի 1-ի դրությամբ ՀՀ-ում արձանագրվել է կորոնավիրուսային հիվանդության 422871 դեպք (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 14291), որից՝ 1081-ը (0.3%) ստանում է բուժում, 411485 (97.3%) անձ առողջացել է, 8622 դեպքում (հ.գ. ըստ 100.000 բն.՝ 291.4) արձանագրվել է մահվան ելք, մահաբերությունը կազմում է 2%:




ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. COVID-19-ի հիվանդության և մահացության դինամիկան

Հաստատված դեպքեր




Մահվան դեպքեր



Դեպքերի գերակշիռ մասը բաժին է ընկնում 55-ից 70 տարեկան և 30-ից 40 տարեկան տարիքային խմբերին: Հատկանշական է, որ արձանագրված դեպքերի մոտ 57%-ը կանայք են, իսկ մահացությունը տղամարդկանց և կանանց մոտ գրեթե նույն մակարդակին է:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. COVID-19-ի դեպքերը՝ ըստ սեռատարիքային խմբերի



Արձանագրված դեպքեր՝

Տղամարդ-43%

Կին-57%

Մահացություն՝

Տղամարդ-51%



Կին-49%

Բուժաշխատողների շրջանում արձանագրվել է COVID-19-ի վարակի 8197 դեպք, որը կազմում է ընդհանուր արձանագրված դեպքերի մոտ 1.9%-ը: Ընդ որում դեպքերը հիմնականում արձանագրվել են միջին բուժաշխատողների շրջանում՝ 43% և բժիշկների շրջանում՝ 31%: Ինչպես երևում է գծապատկերից՝ ակտիվ պատվաստումը բերել է դեպքերի կտրուկ նվազման: Հարկ է նշել, որ մայիսի 1-ի դրությամբ բուժաշխատողների 96%-ը պատվաստված է:

**ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. Կորոնավիրուսային հիվանդության դեպքերը բուժաշխատողների շրջանում
2022թ. մայիսի 01-ի դրությամբ**

8197 դեպք, որից՝

- **Բժիշկ- 31%**
- **Միջին բուժաշխատող- 43%**
- **Կրտսեր բուժաշխատող- 12%**
- **Այլ- 14%**




Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 109 դեպք (հ.գ. 3.7 դեպք ըստ 100.000 բնակչության), ինչը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ (188 դեպք, հ.գ. 6.4 դեպք ըստ 100.000 բնակչության) նվազել է -42%-ով: Թեստավորման դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 0.3%, այնինչ նախորդ 14-օրյակում՝ 0.5%: Վարակի վերարտադրության ցուցանիշը 14 օրվա հաշվարկով 2022 թվականի ապրիլի 30-ի դրությամբ, ինչպես նաև 2 շաբաթ առաջ կազմում է 0.7: Վերջին 7 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 46 դեպք, ինչը նախորդ նույն ժամանակահատվածի համեմատ (63 դեպք) նվազել է -27%-ով:

Թեստավորման դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 7 օրվա ընթացքում կազմել է 0.2%, այնինչ նախորդ շաբաթ՝ 0.3%:

Այս պահի դրությամբ վարակի վերարտադրության ցուցանիշը (7 օրվա հաշվարկով) կազմում է $R_t=0.6$: Արձանագրված բոլոր դեպքերը ենթարկվել են համաճարակաբանական հետազոտության:


ԳԾԱՊԱՏԿԵՐ 6. Մանկապատանեկան տարիքային խմբերում դեպքայնության շարժընթացը վերջին 14+14 օրվա ընթացքում



Վերջին 14 օրվա ընթացքում արձանագրվել է հիվանդության 3.7 դեպք ըստ 100.000 բնակչության, իսկ թեստերի դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում

կազմել է 0.3%, ինչն ըստ Եվրամիության չափանիշների՝ համարվում է «Կանաչ գոտի»:⁴

ԳԾԱՊԱՏԿԵՐ 7.Ռիսկի գոտիները՝ ըստ Եվրամիության չափանիշների



ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑ

Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակի կանխարգելման գործընթացում առանցքային դեր ունի պատվաստանյութի կիրառումը: COVID-19-ի դեմ առկա բոլոր պատվաստանյութերը կանխարգելում են հիվանդության ծանր, ծայրահեղ ծանր ձևերը և մահվան դեպքերը, կրճատում են հոսպիտալացումն ու նվազեցնում առողջապահական համակարգի բեռը:

Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումները Հայաստանի Հանրապետությունում մեկնարկեցին 2021 թվականի ապրիլից «ԱստրաՋենեկա» պատվաստանյութով: Սակայն դեռևս 2020 թվականի նոյեմբերին Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանին տրամադրվել էր «Սպուտնիկ-Վի» պատվաստանյութ՝ որպես նվիրատվություն, որի կիրառումը նպաստեց բնակչության շրջանում COVID-19-ի դեմ պատվաստումների նկատմամբ որոշակի պահանջարկի ձևավորմանը:

Հայաստանի Հանրապետությունում COVID-19-ի դեմ պատվաստումները պատվաստումային գործընթացի մեկնարկի սկզբում նախատեսված էին առաջնահերթ ռիսկի խմբերի անձանց համար, մասնավորապես՝ 65 և բարձր տարիքի անձինք, 16-ից 64 տարեկան քրոնիկ հիվանդներ, բուժաշխատողներ, տարեցների խնամքի կենտրոնների բնակիչներ և աշխատակիցներ, սոցիալական խնամքի կենտրոնների աշխատակիցներ: Հաջորդիվ, COVID-19-ի դեմ պատվաստումները հասանելի դարձան նաև 18 տարեկան և բարձր տարիքի անձանց համար՝ ըստ դիմելիության, ինչպես նաև 12-17 տարեկան երեխաների համար «Մոդեռնա» և «Պֆայզեր» պատվաստանյութով՝ ըստ դիմելիության, ծնողի գրավոր համաձայնության դեպքում:

Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստումներն իրականացվում են առողջության առաջնային պահպանման կազմակերպություններում (պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ)՝ անկախ կցագրումից, շարժական պատվաստումային

⁴ <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2021/06/14/covid-19-council-updates-recommendation-on-free-movement-restrictions/>

կետերում: Իրականացվում են նաև արտագնա պատվաստումներ՝ շարժական պատվաստումային խմբերի միջոցով, սահմանափակ շարժունակությամբ անձանց կեցության վայրերում:

Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումներն իրականացվում են շարժական պատվաստումային կետերում՝ անվճար:

Հայաստանի Հանրապետությունում պատվաստումներն իրականացվում են հետևյալ պատվաստանյութերով՝ «ԱստրաՉենեկա», «Սպուտնիկ-Վի», «ԿորոնաՎակ», «Սինոֆարմ», «Մոդեռնա», «Պֆայզեր», «Սպուտնիկ Լայթ»:

Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստանյութերը լայնորեն կիրառվում են ամբողջ աշխարհում: 2022 թվականի մայիսի 1-ի դրությամբ ամբողջ աշխարհում իրականացվել է ավելի քան 11.62 մլրդ դեղաչափ պատվաստում: Ամբողջ աշխարհի բնակչության մոտ 65.6%-ը ստացել է կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստում: Օրական կատարվում է 10.53 մլն դեղաչափ պատվաստում ամբողջ աշխարհում: COVID-19-ի դեմ ամբողջական պատվաստումներում բնակչության շրջանում առավել բարձր ընդգրկվածություն գրանցվել է Արաբական Միացյալ Էմիրություններում՝ 96.72%, Սինգապուրում՝ 91.37%, Չիլիում՝ 90.9%, Կուբայում՝ 87.89%:⁵

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Հայաստանում 2022 թվականի մայիսի 1-ի դրությամբ 18 տ. և բարձր տարիքի բնակչության շրջանում COVID-19-ի դեմ առաջին դեղաչափ պատվաստումների կատարողականի միջին հանրապետական ցուցանիշը կազմել է 50.0%: Առավել ցածր ցուցանիշ գրանցվել է Տավուշի մարզում՝ 38.1%, Սյունիքի մարզում՝ 41.9%: Առավել բարձր ցուցանիշ գրանցվել է Արարատի մարզում՝ 57.0%, Արագածոտնի մարզում՝ 54.1% և Երևան քաղաքում՝ 53.4%:

ԱՂՅՈՒՍԱԿ 2. Պատվաստումներում ընդգրկված ության ցուցանիշներ՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի

Մարզ/ք. Երևան	1-ին դեղաչափ, % /18 տ. և բարձր բնակչության թվից /	2-րդ դեղաչափ, % /18 տ. և բարձր բնակչության թվից /	Բուստեր դեղաչափ, %, /18 տ. և բարձր բնակչության թվից /	1-ին դեղաչափ, % /ընդհանուր բնակչության թվից /	2-րդ դեղաչափ, % /ընդհանուր բնակչության թվից /	Բուստեր դեղաչափ, %, /ընդհանուր բնակչության թվից /
Արագածոտն	54.1	46.5	2.4	40.4	34.7	1.8
Արարատ	57.0	51.5	3.5	42.9	38.8	2.6
Արմավիր	48.9	44.4	2.3	37.3	33.9	1.7
Գեղարքունիք	47.3	41.0	1.7	35.8	31.0	1.3
Լոռի	45.4	41.0	1.8	34.0	30.7	1.4
Կոտայք	49.1	44.8	1.8	36.7	33.5	1.3
Շիրակ	44.8	39.9	2.0	33.6	29.9	1.5
Սյունիք	41.9	35.8	0.9	33.1	28.2	0.7
Վայոց ձոր	49.0	44.2	1.1	37.8	34.1	0.9
Տավուշ	38.1	34.1	1.1	29.3	26.2	0.9
Երևան	53.4	46.9	2.4	41.0	36.0	1.8
ՀՀ	50.0	44.4	2.2	38.1	33.8	1.6


COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունն առավել ցածր է դիսկի խմբերի՝ մասնավորապես 65 և բարձր տարիքի բնակչության շրջանում՝ առաջին դեղաչափ 42.8%, երկրորդ դեղաչափ՝ 39.2%: COVID-19-ի դեմ 65 և բարձր տարիքի բնակչության 2-րդ դեղաչափ պատվաստումներում ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ գրանցվել է Սյունիքի մարզում՝ 28.0%, Տավուշի մարզում՝ 31.6%, Լոռու մարզում՝ 34.5%: Առավել բարձր ցուցանիշ գրանցվել է Արմավիրի

5 <https://ourworldindata.org/covid-vaccinations?country>

մարզում՝ 49.2%, Արագածոտնի մարզում՝ 48.4%, Արարատի մարզում՝ 46.5%: Տե՛ս աղյուսակ 3.

ԱՂՅՈՒՍԱԿ 3. COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունը 65տ. և բարձր տարիքի բնակչության շրջանում

Մարզ/ք.երևան	65տ և բարձր բնակչության թիվ	1-ին դեղաչափ	%	2-րդ դեղաչափ	%	Բուստեր	%
Արագածոտն	12766	7298	57.2	6180	48.4	415	3.3
Արարատ	27039	14088	52.1	12562	46.5	1293	4.8
Արմավիր	26414	14205	53.8	12999	49.2	905	3.4
Գեղարքունիք	22804	11468	50.3	10116	44.4	537	2.4
Լոռի	27995	10403	37.2	9651	34.5	545	1.9
Կոտայք	26512	12036	45.4	11101	41.9	636	2.4
Շիրակ	26656	11198	42.0	10272	38.5	770	2.9
Սյունիք	18549	5958	32.1	5195	28.0	196	1.1
Վայոց ձոր	6181	2627	42.5	2444	39.5	101	1.6
Տավուշ	17192	6063	35.3	5430	31.6	206	1.2
Երևան	160827	64171	39.9	60184	37.4	4621	2.9
ՀՀ	372935	159515	42.8	146134	39.2	10225	2.7




ԳԾԱՊԱՏԿԵՐ 8. COVID-19-ի դեմ պատվաստումների շարժընթացը

COVID-19-ի դեմ պատվաստումների շարժընթացի գծապատկերից երևում է, որ սահմանափակումների ներդրման արդյունքում դիտվել է COVID-19-ի դեմ պատվաստումային գործընթացի ակտիվացում, մասնավորապես՝ 2021 թվականի սեպտեմբեր ամսվա պատվաստումների տվյալների հետ համեմատ՝ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին առաջին դեղաչափով պատվաստումների թիվն ավելացել է մոտ 2 անգամ: Հոկտեմբեր ամսին երկրորդ դեղաչափով պատվաստումների թիվը՝ սեպտեմբեր ամսվա տվյալների հետ համեմատ, աճել է մոտ 2 անգամ, նոյեմբերին՝ 4, իսկ դեկտեմբերին՝ մոտ 5 անգամ: Սակայն, վերջին ամիսներին դիտվում են COVID-19-ի դեմ պատվաստումային գործընթացի նվազման միտումներ, մասնավորապես՝ 2022թ. հունվար-ապրիլ ժամանակահատվածում առաջին դեղաչափով պատվաստումների թիվը նվազել է մոտ 6.3 անգամ:


COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունն ըստ սեռի չունի հստակ համաճարակաբանական օրինաչափություն և պատկերը հետևյալն է՝ COVID-ի դեմ պատվաստումների առաջին դեղաչափ պատվաստումներում տղամարդկանց ընդգրկվածությունը 57.8% է, կանանց ընդգրկվածությունը՝ 42.7%, երկրորդ դեղաչափ պատվաստումներում տղամարդկանց ընդգրկվածությունը 52.3%, կանանց ընդգրկվածությունը՝ 37.5%, բուստեր դեղաչափ պատվաստումներում տղամարդկանց ընդգրկվածությունը՝ 2.4%,

կանանց ընդգրկվածությունը՝ 1.9 %:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 8. 18տ. և բարձր տարիքի բնակչության ընդգրկվածությունը COVID-19-ի դեմ պատվաստումներում



COVID - 19 - ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի



	12-17 տարեկան	18-34 տարեկան	35-64 տարեկան	65+ տարեկան
1-ին դեղաչափ	1.4%	46.5%	53.3%	42.7%
2-րդ դեղաչափ	0.9%	39.6%	48.4%	39.1%
Բուստեր	0%	1.6%	2.3%	2.7%

01. 05. 2022

Առողջապահության
Նախարարություն
Ministry of Health of the Republic of Armenia

COVID-19-ի դեմ պատվաստումներում ընդգրկվածությունն ըստ տարիքային խմբերի ունի հետևյալ պատկերը՝ ընդգրկվածությունն առավել ցածր է 65 տարեկան և բարձր տարիքային խմբում, մասնավորապես՝ առաջին դեղաչափ պատվաստումներում ընդգրկվածությունը 42.7% է, երկրորդ դեղաչափ պատվաստումներում ընդգրկվածությունը՝ 39.1%, բուստեր դեղաչափ պատվաստումներում ընդգրկվածությունը՝ 2.7%:




COVID-19 AS A GLOBAL HEALTH CHALLENGE

On December 31, 2019, the Wuhan Municipal Health Commission released a report defining 27 cases of pneumonia of unknown etiology, and on January 7, Chinese authorities confirmed that the pathogen of the disease is a new coronavirus, temporarily named as 2019-nCoV. The World Health Organization (WHO) released a report on the situation. Yet in January 2020 based on information of WHO report, response measures to address the potential danger were initiated in the Republic of Armenia. The early launch of such activities was primarily due to the fact that the virus was unknown, and, had a strong potential to spread quickly to become a public health emergency of international concern.

The COVID-19 epidemic situation in the world is relatively stable currently. As of May 1 (11:32 pm CEST) 513,651,195 confirmed cases of the disease were registered worldwide, 293,010 of which were new cases and 6,261,807 – death cases (2.03%)¹. Cases have been reported in 223 countries. In the list of countries with the highest incidence are the United States, India, Brazil, the Russian Federation, France, the United Kingdom, Turkey, Argentina, Colombia, Spain, Italy, Iran, and others.²

Figure 1: Proportion of cases by WHO region




WHO in collaboration with international expert bodies, national authorities, and various institutions and researchers, has been following and assessing SARS-CoV-2 mutations since January 2020. The latest variants that emerged in 2020 posed a major threat to global public health and therefore have led to the classification: Variants of concern (VOC), Variants of interest (VOI), and Alerts for Further Monitoring (VUM). The latter were named as coronavirus new variants by WHO, using the letters of the Greek alphabet, starting with the Alpha variant, which appeared in 2020.

1 <https://covid19.who.int/>

2 <https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019>



Variants of Concern



The most dangerous variants of coronavirus disease are listed below in chronological order: according to the mutation that increases the transmissibility of coronavirus from person to person, alteration of the disease symptoms or resistance to vaccines and drugs. Some of them are already reclassified as to “De-escalated Variants” list at the moment. “De-escalated variants” are the types of coronavirus disease that are no longer circulating or have been circulating for quite a long time, leaving no significant impact on the epidemic situation.³

TABLE 1.- The most dangerous variants of the COVID-19 pathogen

WHO name	Registered for the first time	Date
Alpha	Great Britain	September 2020
Beta	South Africa	September 2020
Gamma	Brazil	December 2020
Delta	India	December 2020
Omicron	South Africa	November 2021
Omicron BA.1	South Africa	November 2021
Omicron BA.2	Philippines	November 2021
Omicron BA.3	South Africa	November 2021
Omicron BA.4	South Africa	January 2022
Omicron BA.5	South Africa	February 2022

MEASURES TAKEN TO OVERCOME COVID-19 IN THE REPUBLIC OF ARMENIA

On January 26, 2020, when the WHO announced the third level of severity of coronavirus disease outbreak according to the 3-point system, preparations for combating COVID-19 had already begun in Armenia. In order to prevent COVID-19 in the Republic of Armenia, on January 23, 2020, the Ministry of Health, in cooperation with all stakeholder agencies, began to take a number of measures to respond to COVID-19. As a result of the study of international experience and based on WHO recommendations, the guidelines for the fight against COVID-19 were adapted for the country; regulatory framework for the implementation of preventive and anti-epidemic measures were developed to ensure combat measures against COVID-19, the existing capacities in the healthcare facilities of the country were assessed, infection control program was revised and adapted. Constant contact was maintained with international organizations and regional partners to build capacities to fight the infection.

³ <https://www.ecdc.europa.eu/en/covid-19/variants-concern>



The first case in Armenia was registered on March 1, 2020, the case identified was a person that has arrived from Iran. Upon detection, the case as well as all ring contacts were identified and isolated accordingly in special areas designated for such purpose, this has allowed to suspend the rapid spread of infection, enabling the health system to reorganize and resist the epidemic. After the first case was registered, national database of COVID-19 patients was developed. In early March, WHO regional experts arrived in Yerevan to assess the hospital preparedness to combat COVID-19. The 24/7 Operative Call Center was established, through which the population has been provided with answers and advices related to COVID-19.

An Interagency Commission has been set up to coordinate activities aimed at prevention of the spread of COVID-19 in the country, the ARMED e-Health Unified Information System was adapted to the country's requirements for COVID-19 thus allowing the Ministry of Health to launched the implementation of the system in integrity.

In accordance with the development stages of the epidemic, 3 separate emergency response plans were developed, which were implemented for the entire country. Based on the experience of WHO and a number of other countries, for the prevention of COVID-19, the legal -regulatory framework has been developed and improved as needed. Within that framework and in line with the international experience and new recommendations of WHO, the COVID-19 standard case definition, COVID-19 preventive and anti-epidemic measures were introduced, and within the framework of COVID-19 epidemiological surveillance system, data analysis had been continuously conducted. Based on the analysis, the current situation was assessed, and as a result, if necessary, a package of recommendations on preventive and anti-epidemic measures for mitigation or tightening of restrictions were introduced. In particular, on March 16, 2020, a state of emergency was declared on the whole territory of the Republic of Armenia. From September 11, 2020, by the Government Decree of the Republic of Armenia, a quarantine was established on the entire territory of the Republic of Armenia. A commandant's headquarter had been established to carry out joint management of the forces and measures ensuring the legal regime of the state of emergency. Restrictions on free movement and economic activities were introduced. A special regime of entry and exit, self-isolation was introduced; the public transport operation was banned at central and inter-regional levels, limited movement was allowed with restrictions. Temporary ban and restrictions on public gatherings and events have been introduced as well as mandatory requirement to wear masks in open and closed areas. The penalties applied for administrative offenses were tightened at the legislative level. In 2021 requirements were introduced on employees' attendance at workplace with a negative PCR result or vaccination status, QR code access to public places, and suggestions were made to organize distance learning in schools or to extend the vacation.

Restrictions were based on epidemiological risk assessment. To combat COVID-19, a number of medical centers were re-profiled to become centers for treatment of COVID-19 patients. In the early stages of the pandemic, i.e. in March, one healthcare facility – the National Center for Infectious Diseases CJSC was involved in the treatment of COVID-19 patients. Subsequently, in accordance with the course of COVID-19 pandemic stages and for treatment of COVID-19 patients, who need hospital care, 35 healthcare facilities (19 – in the regions and 16 – in Yerevan) completely or partially were re-profiled and equipped with the necessary equipment, drugs and medical supplies. More than 3,100



beds were placed in the re-profiled facilities, nearly 480 of which were in resuscitation. At the same time, medical care and services have been provided in primary healthcare facilities for patients, who don't need hospitalization

In order to strengthen the laboratory capacity related to COVID-19 pandemic, PCR methodology was introduced in the laboratories of the “Reference Laboratory Center” and 5 Marz branches of the “National Center of Disease Control and Prevention” SNCO of the Ministry of Health, “National Center for Infectious Diseases” CJSC and “National Pulmonary Center” SNCO in 2020. The mentioned laboratories were equipped with the necessary equipment, the specialists participated in appropriate trainings (in the field of sampling, transfer of sample storage, research). External quality evaluation programs of the laboratory conducting COVID-19 PCR testing in the territory of the Republic of Armenia were organized through re-approval of samples, on-site assessments with questionnaires.

The National Center of Disease Control and Prevention of the Ministry of Health of the Republic of Armenia, in collaboration with the Institute of Molecular Biology of the National Academy of Sciences and the Armenian-Slavonic University, has carried out and continues to carry out molecular genetic research on samples. Molecular genetic testing of pathogens using sequencing method have been introduced at the Reference Laboratory Center. In particular, the COVID-19 virus was sequenced, as a result of which the “Delta” and, in 2022, the “Omicron” variants were discovered.

